

ՆՋԴԻ ՔՐԴԵՐ ¹⁾

I.

Ամենահին ժամանակներից սկսած մոռոտական բրդերից զատ Հայաստանում ապրում են և բաւականաչափ չար և բարի ոգիներին հաւատացող Եզդի-բրդեր:

Ինչպէս ուրիշ շատ ազգերի, նոյնպէս և եզդիների անցեալը, նոցա ծագումը և գեղակցական կապը մինչև այժմ էլ անյայտութեան մէջ կորած է: Պատմութիւնը պիտի բուռն ժողովրդի անցեալի մասին լուծւի է: Մանաւանդ հետաքրքիր է նոցա հաւատքը, որ չնայած բազմաթիւ բռնութիւնների և հալածանքների, ամենայն յամառութեամբ պահպանել են իրենց պիտի սրբազան ազանդը: Մինչև օրս էլ արեւելքում որեւիցէ մի ժողովրդի կամ անհատի ծայրահեղ յամառութեան կամ տարօրինակ բնաւորութեան աստիճանը բնորոշելու համար «եզդի-միլլէթ» արհամարհական ածականն են տալիս: Եզդիների կրօնի ծագման մասին բազմաթիւ տարբեր ենթադրութիւններ են եղել: Ոմանց ասելով հին կրակապաշտ պարսեց մնացորդներից են, ոմանք հաստատում են թէ Ասորեստանի աղանդաւորների, հրէաների, արաբացիների մնացորդներն են և այլն: Եւրոպացիներ կարծիքների պատճառը ոչ այլ ինչ է, եթէ ոչ այն, որ առհասարակ եզդիները, ինչպէս իրենց գեղական ծագումը, նոյնպէս և ծէսերն ու սովորութիւնները յարմարեցրել են ըստ ազգաբնակչութեան: Այսպէս օրինակ. Հայաստանի եզդիք իրենց հայ ծագումից են համարում և բոլորովին հայ ծէսեր և սովորութիւններ ունին (օր. պաս պահել. երեւաններին և հոգևորական-

¹⁾ Այս յօդուածը գրելիս ի նկատի եմ ունեցել նաև Ծ-
лизо-ревью-ի ընդհ. ազգաց աշխարհագրութիւնը, «Արձագանք»
ի 1890 թ. «եզդի բրդեր» յօդուածը, «Армянский еризисъ и
владычество турокеъ» յօդուածները:

ներին մօտաւորապէս բրիտանական ձեով մկրտել և ձեռնադրել, ոգելից խմելքներ խմել և այլն): Մինչդեռ Միջագետքի եզդիներն իրենց արարական ծագումից են համարում, կատարում են մահմեդական ծեսեր (օր. թլպատութիւն, բազմակնութիւն, պաս չպահել և այլն): Նոյնը կարելի է ասել և Պարսկաստանի եզդիների համար: Միայն բոլոր եզդիների համար մի ընդհանուր կապ կայ. այդ եզդիների Միլէք-Թառանէ, որի մասին յետոյ կը խօսուի:

Երբաւի, Հայ պատմիչներին, ինչպէս նաև Հայաստանում ընակւող եզդիների սովորութիւններին, կրօնական մի քանի ծեսերին և նոյն իսկ դիմագծերին նայելով դժուար է գալ այն եզրակացութեան, որ գոնէ Հայաստանում ընակւող եզդիները հայ ծագում ունին, հայ աղանդաւորներ են, որոնք ժամանակի ընթացքում լեռնային ելուզակների հետ շփուելով, լեռներում ապաստան գտնելով, փոխել են իրենց լեզուն, սեպհականացրել լեռնցու դիւղապնական հոգին: Իսկ աղանդը ինչպէս ասացինք յամառութեամբ մինչև օրս էլ պահպանել են: Հէնց իրենք եզդիներն են հայերին պատմում Վերքան, (մատաղ) դուք չիտէք, համա մենք աղէկ գիտենք, մեր շէնքն ասում են որ առաջ մենք էլ հայ ենք եղել, իսկ այժմս միայն մի մազի չափ ենք հայերից հեռու: Չամչեանի ասելով, այս աղանդի ա. հաւատացող և հիմնադիր եղել է IX դդ դարի սկզբներում հայ թոնդրակեցի աղանդաւորներից Սմբատ անունով մէկը: Այս նոր աղանդին ինչպէս պատմութիւնից յայտնի է, ամենից կատաղի թշնամի է հանդիսանում մեր XI դդ դարի պատմագիր Գրիգոր Մագիստրոս, որ այդ միւսնոյն Սմբատին զանազան հայհոյական խօսքեր է ուղղում: Իսկ զալով «եզդի» անունան, օտար աղբիւրներին նայելով դա Մահմեդի թու Հուսէյին մարգարէի սպանող «եզդի»-ի անունից է: Մինչդեռ հայ աղբիւրներին նայելով եզդի անունը Սմբատի յաջորդներից մէկի անունն է: Այդ հաստատում են հէնց իրենք եզդիք, որ «եզդի» բառը իրենց շէնքերից մէկի անունն են վերագրում: Եւ որովհետև Սմբատի հետևորդները պէտք էր խիստ զաղտնապահ լինէին, հետևաբար դժուար էր լինում նոցա աղանդի գաղտնիքը իմանալ: Եզդիները մինչև այժմ էլ առ հասարակ խոյս են տալիս իրենց կրօնի ու աղանդին վերաբերեալ հարցերով հետաքրքրուող այլապգիներին բաւականութիւն տալ: Մինչև հիմայ էլ ոչ մի օտարազգի, նոյն իսկ եզդիների հետ միասին ապրող հային չի յաջողուել նոցա

Թաղման հանդիսի ծէս տեսնել կամ իմանալ:

Ինչպէս ասացինք, բոլոր եղբայրներն էլ հաւատում են Թե-
ւաւոր Միլեք Թառախն, որին անուանում են աստուած լոյսի,
կրակի, ս. հոգոյ, տէր կեանքի ևն: Եղբայրներ Միլեք Թառախն
Թուգունի կերպարանքով են երեակայում, որը տեղաւորուած է
ոսկէ աշտանակի տակ: Միլեք-Թառախ նախարարը Լուցիֆէրն է,
որին անուանում են և շէյտան¹⁾: Նոքա ասում են, որ շէյտանը
աստուծոյ ամենասիրելի հրեշտակն է եղել, բայց յետոյ աս-
տուած նորա վերայ բարկանալով անիծել և երկնքից վայր է
ձգել: Նոքա հաւատում են, որ Լուցիֆէրը նորից աստուծոյ սի-
րելին կդառնայ և նորա անսահման ողորմութեան կարժանա-
նայ: Եթէ—ասում են նոքա—մենք հասարակ մահանացունք
յոյս ունինք մեր աղօթքներով հոգու փրկութիւն գտնել, հապա
էլ ինչու Մեծ-վնդուածը չպէտք է նորից երկնային զինուոր-
ների դասը դասուի: Գուցէ Մովսէս, Յիսուս, Մուհամէդ մար-
դարէները նորա այլափոխութիւնն էին, կամ գուցէ մինչև այժ-
մըս արդէն նա երկնք է բարձրացել:

Շէյտանից զատ նոքա հաւատում են ինչպէս չար ու բա-
րի ոգիներին, նոյնպէս և արեգական և լոյսին—ինչպէս հին
հայերն և պարսիկները: Այս բոլորի հետ միասին եղբիք սիրում
են երկրպագել գեղեցկութեան և սիրոյ պաշտաման: Նոքա գի-
տեն իրենց սիրելի հերոսներին, կռուի դաշտում մենուղ բաջ
տղամարդի յիշատակը նորա վերայ յօրինուած խուճուճ մաշե-
րով և սևաչեւայ չքնաղ եզդուհու մարգարտանման արցունք-
ներով Թախած երգերով յաւերժացնել, և զգացուել նոցանով:

II

Եղբայրների բարձրագոյն հոգեւոր պետը—«շեխ-խան» է կոչ-
ւում: Շեխ-խանի իշխանութիւնը ժառանգական է: Արեւելեան ազ-
գերի սովորութեամբ, Շեխ-խանը և միևնոյն ժամանակ աշխարհա-
կան գործերի իրաւասու պահապան է: Նա բնակւում է Մօսու-
լից դէպի հիւսիս գտնուող Բաադլիում-Սինչար լեռան ստորոտ-

¹⁾ Շէյտան բառը հայերէն դե կամ սատանայ է նշանա-
կում: Չգիտեմ ինչո՞ւ համար հայերը եղբայրների հետ խօսելիս
նոցա շէյտանին-Լուցիֆէրին «Քեռի» անուն են տալիս: «Քեռի»
անուն է տալիս տաճկահայ գիւղացին նոյնպէս իւր տան երեւ-
ւացող օձերին:

ներում, կուցած մի հսկայ ժայռի տակ, Սինչարից մի բանի-
 ժամ հեռու գտնուում է եզդիների ամենամեծ ուխտատեղի՝ Լա-
 լէխնէ, Պատմում են, որ Լալէխնէ ուխտատեղում նոյնքան սե-
 նեակներ կան, որքան տարին օրեր ունի։ Այդ միևնոյն ուխտա-
 տեղումն է ապրել և մահացել եզդիների ամենամեծ փեխամ-
 բէր Ադին-որ գրել է եզդիների Ս. գիրք «Ասվատ կամ սե»
 կոչուած. որ այժմս գոյութիւն չունի, և ոչ էլ պոյ գրու-
 քի մասին օտար պատմութիւններում յիշատակութիւններ
 կան։ Միևնոյն Լալէխնէ ուխտատեղումն է գտնուում շեխ-
 Ազու մարդարէի նշխարները, որտեղ վառուում է յաւիտե-
 նական ճրագը։ Այդտեղ բազմութիւ հաւատացեալների ներ-
 կայութեամբ (որ գալիս են շատ հեռաւոր տեղերից) կատարում է
 եզդիների ամենաշքեղ կրօնական հանդէսը։
 Այդ հանդիսին ներկայ գտնուող ամերիկացի միսիօնարնե-
 րից մէկն այսպէս է նկարագրում «հաւատացեալ ուխտաւորներն
 այնպիսի ժամանակ են ընտրում, որպէս զի նախ քան առաւօտեան
 արշալոյսի բացուելը ուխտատեղում գտնուին, երբ արդէն արե-
 գակի ծառագայթների շողքերը դուրս են գալիս, հաւատացեալ-
 ները իրենց կազմ ու պատրաստ շեխերով հանդերձ ամենայն
 ջերմեռանդութեամբ 3 անգամ խոնարհ ողջունում են արեգա-
 կի սրբազան ծառագայթներին»։

Եզդիները հաւատում են շրջագծի—ջիդի թոմէլութեան.
 Եթէ եզդու քնած կամ չնկատած ժամանակ նորա չորս կողմը
 շրջագիծ բաշուի, նա այլ ևս չի կարող շրջագծից դուրս գալ
 և ստիպուած պիտի լինի օրերով սպասել՝ խնդրել աղաչել, որ-
 պէս զի քաշած շրջագիծը ջնջուի և յետոյ նոր կարողանայ տե-
 դից շարժուել։

Եզդիների հոգևոր պետերը 2 տեսակի են բաժանուում
 —շեխեր կամ կաւալներ (բարձրաստիճան հոգևորականներ) և
 փիրեր, Կաւալներն ընդհանրապէս գլխներին սպիտակ փաթ-
 թոցներ են կապում և սպիտակ վերարկուներ են հագնում, իսկ
 ընդհակառակ փերերը—սև։ Եզդի հոգևորականների միրուքին
 ածծելի կամ մկրատ երբէք չպէտք է դիպչի։ Նոցա շեխերի-

Եզդիները չափազանց կլիրաւորուեն, նոյն իսկ դէպք պա-
 տահած ժամանակ իրար վրէժխնդիր կլինին այն յանդուգն
 պլազդիներից, ովքեր կհամարձակուեն իրենց սրբազան շէյ-
 տանին՝ հայհոյել կամ ծաղրել։

ձեռնադրութիւնը ասում են շատ նման է մեր քահանաների ձեռնադրութեան: Զեռնադրելիս յողացնում են ջրի մէջ և ապա ծնկաչոք բարձրաստիճան հոգեւորականների ներկայութեամբ երգում են հաւատարիմ մնալ իրենց սրբազան աղանդին, օրինապահ լինել և յամենայն դէպս աշխատել իւր ժողովրդի շահերին պաշտպան հանդիսանալ: Եզդիների ամբաստական, թաղման և մկրտութեան ծէսերը կատարում են շեխերը՝ իրենց սրբազան և նուիրական օջաղի վերայ: Ծիսակատարութեան ժամանակ շեխը մի սպիտակ շապիկ հագած, ձեռքը ամուսնացող զոյգերի գլխին դնելով, բանաւոր կերպով խրատներ է կարդում—լինել բարի, սիրել միմեանց, ճշտութեամբ պահպանել իրենց նախնիին սովորութիւններն ու աղանդը: Այս բոլորից յետոյ նոր եզդի շեխը սկսում է ամուսնացողների բեաբինը կտրել ¹⁾:

Եզդական աղանդին են նմանում Տաճկաստանում ապրող նասրանի կոչուած ասորի աղանդաւորներ և Փոքր-Ասիայի շիրակ-Սոնդուրան կոչուող զղլբաշներ: Չիրակ սոնդուրան են կոչուում զիշեր ժամանակ իրենց տարօրինակ աղօթքներ կարդալու համար: Նոքա խառնուրդ են քրիստոնէական և մահմէդական կրօններին, կատարում են մկրտութեան ծէս, լուսացում, խմում են գինի և այլն: Նոցա հոգեւոր պետը նշատում է Դերսիմում-Մուրադ գետին մօտիկ, որոնք թէև պաշտօնապէս մահմէդական են ճանաչուում, բայց ներքուստ աւելի եզդի աղանդաւորներին են նմանում:

III.

Եզդի և մուսուլման բրդերն սկզբից ի վեր փոխադարձ ատելութիւն և թշնամութիւն են տածում դէպի միմեանց: Երբեմն նոցա գեղակցական անվուսպ վրէժխնդրութիւնը այն աստիճան սուր կերպարանք է ստանում, որ կռուի դաշտում

¹⁾ Քեաբին կամ քէրին այն փողի պայմանագիրն է, որ մահմէդական տղամարդ կնոջ արձակելու դէպքում պարտաւոր է շեխի ձեռքով կազմած և պայմանաւորուած փողը կնոջ յատկացնել: Իսկ կինը տղամարդից բաժանուելու դէպքում իրաւունք չունի նորանից դրամ պահանջելու: Ի դէպ է ասել, որ բոլոր եզդիների մէջ չկայ քեաբինի սովորութիւնը:

իւրաքանչիւր կողմից տասնեակներով զոհեր են վայր թափ-
 ւում: Իսկ սովորական խաղաղ ժամանակներում իրարից մաք-
 դիկ սպանել, ցեղակցական պատիւ անարգելու և վիրաւորե-
 լու համար իրարից աղջիկներ և հարսներ փախցնել, մալեր զո-
 ղանալ և այլն—սուբա ըսլորն էլ գրեթէ սովորական բաներ են:
 Քիւրդը լինելով ընտանեկան սրբութեան խիստ նախանձախն-
 դիր և մեկնոյն ժամանակ չափազանց զգայուն, դիւրագրգիռ
 լեռնական մի ժողովուրդ, շատ բնական է որ այսպիսի վիրա-
 ւորանքներին անտարբեր վերաբերուել չի կարող: Նա չի կա-
 րող այս դէպքում չուզուել, չըղաւել, նորա արիւնը չի կարող
 եռ չգալ—մինչև չյուծէ իւր վրէժը, մինչև չխմէ իւր յանդուգն
 ոսոթի արիւնը: Վիրաւորանքի և վրիժառութեան դէպքում քիւր-
 դը դատաւորի կամ դատարանի դիմել չգիտէ, այլ՝ իւր
 սեպհական յոժը իրեն օրէնք ընտրելով, զանազան անարդանք-
 ների և արեան յիշատակը միայն արիւնով է մոռացում: Քրդե-
 րի մէջ ցեղի իւրաքանչիւր անհատի արիւն կամ անարգանքը
 ամբողջ ցեղին է պատկանում: Ինչպէս և ամբողջ ցեղինը—ան-
 հատին է վերաբերում: Եզդի և մուսուլման բրդերի ցեղակցա-
 կան այս թշնամութիւնների պատճառով, այսպէս թէ այնպէս
 աշխատում են միմեանց հետ յարաբերութիւն ունենալուց—
 իրար հիւր լինելուց կամ սահմաններն անցնելուց խոյս տալ
 —ի նկատի ունենալով, որ այսպիսի յարաբերութիւններն ան-
 պայման վտանգաւոր կարող են լինել: Եզդիները խո-
 րին ատելութիւն են տածում նաև դէպի տաճիկները: Եթէ մի տա-
 ճիկ հոգեւորականի պատահի եզդին, նա ամբողջ օրերով կհե-
 տեւէ նորան, մինչև յարմար դէպքում արիւն խմել կարողանայ:
 Հէնց այդ ատելութիւնն է պատճառ, որ երբեք տաճիկը չի հա-
 մարձակւում թէկուզ որքան էլ վտանգաւոր և տարաժամ լինի,
 եզդիների գիւղում հիւր մնալ: Մինչդեռ հայերն ընդհակառակը
 այսպիսի դէպքերում աշխատում են եզդի գիւղերում հիւր լի-
 նել, որ ամենապատուաւոր և սիրալիր կերպով, նոյն իսկ գառ-
 ներով (քիւրդերը, ինչպէս նաև հայ փիւղացիներ—մանաւանդ
 լեռներում եայլայ) բարձրացողներ, իրենց պատուաւոր հիւրե-
 րի համար փոքրիկ գառներ են մորթում և հիւրասիրում) հիւ-
 րասիրւում են եզդիներին: Հայերը ծածկաստանում առ հասա-
 րակ այսպէս յարգւում են ոչ թէ միայն եզդի կամ մուսուլման
 բրդերի զանազան ցեղերից, այլ և նոյն իսկ տաճիկհայատակ
 զվլբաշներին, դիւրպիներին, թուրքմեններին, ինչպէս նաև ջու-

լամերկի ասորիներից և այլն, Հայերն այս բոլորի համակրութեան միջակէտն են կազմում, նորա երևի համոզուած են, որ առանց հայերի չեն կարող իրենց գոյութիւնը պահպանել:

Տաճկահայ հոգևորականներից մէկը 60-ական թուականնե-
րին այն աստիճան յարաբերութիւնների մէջ է գտնուել եզ-
դիների հետ, որ նոյն իսկ փորձեր են արել հայերէն տառեր,
հայ գրագիտութիւն և նոյն իսկ լուսաւորչականութիւն տարա-
ծել նոցա մէջ. թէ որքան է յաջողութիւն գտել այդ՝ յայտնի չէ,
միայն պարան յայտնի է, որ իւր պաշտօնակից կրօնականներից
ծաղողուելով՝ «հրաշագործ» մականուան է արժանացել: Եզդի-
ները լինելով խաշնարած և հալածուած մի ժողովուրդ, բնական
է, որ մէկ տեղ կենդրոնացած լինել չէին կարող, և դորա հա-
մար էլ մենք եզդուս Տաճկաստանի ընդարձակ սահմաններից
գուրս բաւական թուով Պարսկա և Ռուսահայաստանի զանա-
վան անկիւններումն ենք պատահում: Նոցա մեծամասնութիւնն
այժմս պատմական Միջագետքի և Մեծ ու Փոքր Հայաստանի
զանազան տեղերումն են բնակւում: Մեծ Հայաստանում նոցա
մեծամասնութիւնը բնակւում է գլխաւորապէս Բերկրիում, Ա-
լաշկերտում և Տիգրանակերտի շրջակայքում: Եզդի բրդերն Օս-
մանեան պետութեան անզուսպ ռոնձութիւններին և մուսուլ-
ման բրդերի անտանելի բարբարոսութիւններին դիմանալ ան-
կարող լինելով — մեծ մասամբ վերջին ռուս-թրքական պատե-
րազմին Ալաշկերտի, Խոշաբայ և Բերկրի գաւառներից դէպի
Ռուսաց Հայաստան՝ իրենց կրօնակից փոքրաթիւ եզդիների
մօտ գաղթեցին և Ռուս կառավարութիւնից ստացան հողեր,
նորա Ռուսաց Հայաստանում բնակուեցին գլխաւորապէս Սի-
նակայ չքնաղ լեռների ծերպերում, Զիւանլուի և Ղարանլուի
ձորերի մէջ (Թաքեալթու լեռների մօտերը), Աբարանում, և
Ղարսի շրջանում: Եզդի գիւղերի թիւը Ռուսաստանում 50—60-ի
կարող է հասնել (որից 20—25-ը Սինակում, 12-ը Աբարանում,
իսկ մնացեալը Ղարսի նահանգում, Ի դէպ է ասել, որ ինչ-
պէս մուսուլման նոյնպէս և եզդի բրդերի գիւղերը շատ փոքր
են լինում: Երբեմն նոցա գիւղերը 3—5 տանից բաղկացած են
լինում): Իսկ նոցա ընդհանուր թիւը մօտ 10,000-է: Մինչդեռ
ամբողջ Տաճկաստանում նոցա ընդհանուր թիւը 40—50,000-ի
կարող է հասնել (Միմիայն Վանի վիլայէթում վերջին Ռուս-
թրքական պատերազմի ժամանակ պատրիարքաբանի վիճակա-
գրութեան նայելով, նոցա թիւը մօտ 15,000-ի էր հասնում):

Իսկ ամբողջ եղբայրների թիւը գուցէ մինչեւ 60,000-ի հասնի։ Գուցէ եւմ ասոււմ, որովհետեւ Տաճկաստանում, այն էլ այնպիսի մի լեւնային ժողովրդի թիւը, որպիսին է բիւրդը, նոյն իսկ մասաւոր ճշտութեամբ անգամ իմանալ անկարելի է, բանի որ ոչ պաշտօնական ստատիստիկա կ'որոշէ զոյրութիւն ունենալ օսմանեան պետութեան մէջ, և ոչ էլ բիւրգ ցեղապետ կամ կրօնապետ կհետաքրքրի իւր ցեղի թուահամարը ձեռք բերել։

IV

7)

Այս ցեղը, որ գրեթէ բրիտանեանների և մահմէդականներին խառնուրդ կարելի է համարել, իւր բնաւորութեան յատկանշներով, աշխարհայեցողութեամբ և ինստիտիւցիոնով շարժանքների մէջ տեղ կարող է բռնել և հետեւաբար եղբի բրդեր աւելի խաղաղ բնաւորութիւն ունին և աշխատանքի ընդունակ մարդիկ են, բան դիցուք արիւննուշտ ու դատարկապորտ մուսուլման բրդերի զանազան ցեղեր, բայց որպէս լեւնցի, վրէժխնդրութեան ոգին և առհասարակ բրդական հակումներ երբեք չի հանգիլ նոցա մէջ։ Նոքա գիտեն ամենահատաղի կերպով վրէժխնդիր լինել իրենց օջախի և ընտանեկան սրբութիւններ ոտնատակ անող վայրենի մուսուլման բրդերից և Ֆանատիկոս Ռումիներից (տաճիկներից)։ Նյդիներ մուսուլման բրդերի նման բաժանուում են բաղմամբիւ ցեղերի։ Եզիդական ցեղերից յայտնի են Ուլանցի, Հաւէրցի, Հարրիցի, Սիպցի և այլն կոչուածներ, որոնցից իւրաքանչիւրն իւր առանձին ցեղապետն ունեւ, իսկ մի որեւիցէ տեղ բնակուելիս կամ գաղթելիս միենոյն ցեղի անդամներ սովորաբար միմեանց մօտիկ են բնակութիւն հաստատում։ Եզդիք նոյնպէս շատակարգի են բաժանուում։ Բէկերի կամ աշիրամների, և Ռիաթի կամ աշխատաւոր դասակարգի։ Վերջիններս իրենց բէկերի համար են աշխատում։ Նոցա կեանք և մահ աշիրամների ձեռքին է։

Տաճկաստանում բացի Մակեդոնիայից, Հայաստանից, Ալբանիայից, Արաբիայից, բրդական բաղմամբիւ ցեղեր (Դէրսիմցիք, Մօսկցիք, Հարսնանցիք, Հայդարանցիք և այլն) ինչպէս նաև համեմատաբար աւելի փոքրիկ ազգեր—որպիսիքն են եզդիք, դիւրզիներ, թուրքմէներ, ջուլամիկի ազատասէր բրիտանեայ ասորիք ¹⁾ և այլն. մի մի հնոցներ են, որոնք վաղ թէ

¹⁾ Ասորիք, որոնք գլխաւորապէս Զուլամիէլի, Գեամաուի

ուշ սպառնում են տակն ու վերայ անել Տիւանդ պետութեան
ողորմելի գահը, Ի հարկէ այս բոլորը տաճիկ կառավարութիւնն
ինքը ամենից լաւ գիտէ, որի համար և չի կարող հաշտ աջքով
նայել այդ անմխիթար տեսարանի վերայ, իսկ եթէ այս կամ
այն հանգամանքներից—դիպլոմատիքական նենգ հայեացքներից
դրդուած այսպէս ասած ազատանում, կամ թէ չէ ուղղակի
շոյում է նոցա ղեկավարներին տալով նոցա բարձր պաշտոն-
ներ և խոշոր հարստութիւններ—այդ բոլորն էլ միմիայն
ժամանակակոր քաղաքականութիւն է Եւրպեանութիւնն այս է,
որ բոլոր ազգերն էլ Սուլթան-Համիդի «աչքի փշերն» են:
Օսմանեան պետութիւնն երկար տարիների ընթացքում սպառ-
նացել է այն բոլոր յանդուգն հպատակներին (յինին դոքա
քրիստոնեայ կամ այլ կրօնի)—որոնք չեն ուզում ճանաչել, որ
բացի ավահից, ուրիշ ավահ չկայ, և բացի Աբդուլ-Համիդից
ուրիշ փաթիշահ չկայ: Տաճիկական այս անբարոյական սկզբ-
բունքին, այս նողկալի հաւատամքին զոհ են գնացել և շարու-
նակում են գնալ ոչ թէ միայն քրիստոնեաներ—քեաֆիրներ,

եւ մասամբ Շատախի բարձրաբերձ լեռների եւ խոր սւ պտու-
տակաւոր ձորերի ահարկու եւ աննուանի դիրքերումն են
տալում, պատերազմասէր եւ քաջ խաշնարած մի ժողովուրդ են:
Նոքա բոլորն էլ զինուած լինելով հին եւ նոր սիստէմի զէնքե-
րով, կատարեալ պատիժ ու պատուհաս են դարձած հարեւ-
ան քրդերին եւ մինչեւ անգամ տաճիկ զօրթիւսներին: Ինչպէս
հաստատում են, պատերազմի դաշտում ասորիք կարող են
մինչեւ 20—25,000 հրացանաւորներ դուրս բերել:

Նոցա հոգեւոր եւ մարմնաւոր պետը, ինչպէս նաև պատե-
րազմի դաշտի հմուտ եւ քաջ սպարապետը կոչւում է մար—Շի-
մոն (բառացի—պ. Պետրոս): Ասորոց մար—Շիմոնի հետ հայոց
կողմից բարեկամական յարաբերութիւն է հաստատում ա. ան-
գամ երջանկայիշատակ Ներսէս ե. աշտարակցին: 1880 թ. մար-
Շիմոնը կրկին անգամ Վան գնալով (ա. անգամ լինում է 1856
թ.), հայոց առաջնորդարանում փառաւոր կերպով հիւրասիր-
ւում է: Կիսանկախ ասորիք այժմս կառաւարկում են իրենց
Մեկընկերով, եւ նոցա թիւը հայկական այս գաւառներում մօտ
100,000 ի է հասնում: 1843 թ. քրդերը քաջալերուած տաճիկ
կառավարութիւնից սօստիկ կերպով ջարդ են տալիս ասորի-
ներին—կռուող տղամարդկանց բոլորին կոտորելով, իսկ երե-
խաներին էլ բռնութեամբ թլպատելով մահմեդական են դարձ-
նում:

Այդ օրուանից լեռնային ասորիք բաւականին ընկճւում
են: Ասորիք շատ են համակրում հայերին:

այլ և հազարաւոր անմեղ եզդի աղանդաւորներ և մինչև անգամ բազմաթիւ մուսուլման բրդեր (Սուլթան-Մահմուդի օրով — որ սաստիկ առում էր բրդերին) — որոնց այժմս դիպլոմատ Համիդը շքում է:

Եզդիների ա. կոտորածը լինում է 1838 թ. տաճիկների ձեռքով: Եզդիներից ոմանց բարբարոսաբար կոտորում են, ոմանց բռնի մահադական են դարձնում: Իսկ այն մեծագոյն մասը, որոնց յաջողում է պրերում թագնուել բոլորին էլ տաճիկ կառավարութիւնը սիրուն կերպով ձեռով խեղդել է տալիս: Այս կոտորածը տեղի է լինում Միջագետքի դաշտաբնակ եզդիների մէջ, որով տաճիկ կառավարութեանը յաջողում է նուաճել դաշտաբնակ եզդիներին: Իսկ Սինջարի լեռնական եզդիներ մինչև օրս էլ կիսանկախ են ապրում: 1892 թ. սկսւում է եզդիների Բ. պաշտօնական կոտորածը, պաշտօնական եմ առում, որովհետեւ եզդիները յաճախ շատ անգամ նոյն իսկ ամբողջ գիւղերով զոհ են գնացել տաճիկ և մուսուլման բրդերի անարգ զէնքերին: Եզդիների այս վերջին աղէտալի կոտորածը որ տեղի ունեցաւ նոյնպէս Մուսուլից ոչ հեռու գտնուող Բաատլիում և Սինջար լեռան շրջակայքում տեղում է ամբողջ 3 օր, որի ընթացքում ահագին քանակութեամբ եզդիք տաճկաց չարաբաստիկ սրբերն զոհ են գնում, իսկ աղատ մնացածներն էլ զրկւում են միակ ապրուստի միջոցներից — իրենց սիրելի անասուններից և հողերից: Մահադականների կողմից անխնայ կերպով ամեն ինչը կողոպուտի, բռնաբարման, հրդեհ և սրի ճարակ է դառնում: Գոտորածի ժամանակ առանց հասակի և սեռի խորութեան զոհ են գնում թշուառ եզդիքը տաճկական անլուր բարբարոսութիւններին, Եզդիների կոտորածներ միակ պատճառն այն է եղել, որ ֆանատիկ մահադական շեխերի եզդիներին մահադականացնելու — զգուշի պրոպագանդան յաջողութիւն չի գտել, իսկ կոտորածից յետոյ էլ թէպէտ և դաշտաբնակ եզդիները արտաքուստ իսլամութիւն ընդունեցին, բայց ծածուկ մինչ հիմայ էլ իրենց նախնիքների բազմաշարժար աղանդն են դաւանում: Գոտորածի ժամանակ եզդիների մի ստուար մասն էլ ազատստան գտնելով Սինջար լեռան բարձունքների վերայ գտնուող իրենց արիւնակից լեռնցի եզդիների մօտ, անսպասելի դիմադրութիւն գոյց տուին տաճկաց կառավարութեան կանոնաւոր զօրքերին: Այս հերոսական կռիւը տեղում է մինչև 1893 թիւը:

Ինչպէս առհասարակ բոլոր բիւրդ ցեղեր, նշնպէս և եզ-
դիներ միւս մաճմեղական ազգերի նման իրենց «մուսուլման»
կամ «եզդի» կրօնական անուն տալ չգիտեն։ Դիցուք մի մու-
սուլման կամ եզդի բրդու եթէ հարցնելու լինես թէ դու ով
ես, նա կպատասխանէ որ ես «բիւրդ եմ» և երբ հետաքր-
քրուես թէ ինչ բիւրդ ես, նոր կպատասխանի որ մուսուլման
կամ եզդի բիւրդ եմ։ Այսպէս էր մինչև վերջին տարիներ,
բայց հայերի ատելութիւնը դէպի մուսուլման բրդեր զարգա-
նալով, այլ ևս եզդիներ այնքան էլ իրենց «բիւրդ եմ» անունը
պարծանքով չեն տալիս։ Մանաւանդ այդ բանը նկատելի է
ուսահագատակ եզդիների մէջ, որ այսպէս թէ այնպէս հայե-
րից շատ կախում ունին։ Դա մասամբ ցոյց է տալիս, որ կրօ-
նական ոգին շատ թոյլ է արմատացած բիւրդերի—լեռների
այդ արծիւների մէջ, որ նոքա մինչև օրս էլ ոչ կրօնական ազգ
են եղել և ոչ էլ սիրում են կրօնական այս կամ այն հարցի
վերաբերեալ վիճաբանութիւններ—ինչպէս միւս մուսուլման բո-
լոր մուսուլման ազգեր։ Իսկ եզդիների՝ յամուսութեամբ իրենց ա-
ղանդը պահպանելու միակ պատճառը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ա-
ւանդական նուիրագործուած մի սրբութիւն, մի թասիբ, մի նա-
մուս—որ միշտ իրենց յիշողութեան մէջ թարմացնում և ոգե-
ւորում են իրենց դիւցազններգութիւնների մի շարք սիրելի հե-
րոսների անուններ... արիւն... կռիւ... և այլն։

Եզդիները չունին նշնպէս ոչ գիր և ոչ դպրութիւն։ Մի-
այն հազիւ Միջագետքի հոգեւոր պետեր—կաւալներ մի բիչ
արաբերէն գիտենան։ Նոքա ունին միայն հարուստ ֆանտաստիկա-
կան երևակայութիւն, որով հիւսում և զարդարում են իրենց բա-
նաւոր դիւցազններգութիւնները. դիւցազններգութիւններ, որոնց
մէջ մեծ դեր են կատարում տիտանեան յոժեր, գերմարդկային
բաղադրծութիւններ և օջաղի սրբազան ադաւաններ—սովորու-
թիւնների համար մեռնող ջահէլ ջիւան հերոսներ։ Նոցա հե-
րոսների բաղդաւորութիւնը նամարդ ոսոխից վրէժ լուծելու, ցե-
ղական նուիրագործուած ադաւաններ սրբութեամբ կատարելու,
դէպի թոյլ, դէպի անօդնական մեծահոգի վերաբերուելու և
պաշտպան հանդիսանալու մէջն է կայանում։ Նոքա խաշնարա-
ծութեան կամ երկրագործութեան ժամանակ երգում են իրենց
նախորդների մեծագործութիւնները. գովում են դիցուք Հերոս
Քաւոյին կամ Մատոյի բաղադրծութիւններ, թէ ինչպէս նա
կարողացաւ նժոյգի վերայ նստած, հեռաւոր տարածութեան

միջից հրացանի գնդակն ուղղակի թշնամու կրծքումը խրել, և ամ ինչպէս զինուած հերոսը ուխտում է ձիու վերայ շարաթներով սար ու ձոր ընկնել, մինչև կարողանայ գտնել և վրէժ լուծել ցեղական սրբութիւններ ոտի տակ անող անամօթ թշնամուց, Երբեմն քրդական դիւցազներգութիւնների մէջ—ինչպէս մի հմուտ էսթետիկ հանձարի ստեղծագործութիւն, շնչում է բընքում թիւն, սէր, տենչանք, վիշտ, Թախիծ և այլն: Նորա երգում են թէ ինչպէս իրենց պաշտելի հերոսը մարտի ահեղ դաշտում թշնամու մի քանի դիւեր գետին փռելուց յետոյ, ինքն էլ է այդ անհաւասար կռվում վեր ընկել, իսկ նորա բազմաթիւ վէրքերով ծածկուած արիւնաթաթախ դիակը լուսնեակ զիշերին մատաղաճաւ բրդուհիբ ըլլի զլիւն դրած և չորս կողմից շըրջապատած՝ քաղած ծաղիկների արմատներից և արցունքի կաթիլներով շողախած նիւթներից սպեղանի պատրաստելով—իրենց ջէհէլ-ջիւան հերոսին անպայման բժշկել են զանկանում: ¹⁾ Որքան քաջ և վեհանձ տղամարդ քրդական դիւցազներգութիւններում կսիրուի, կպաշտուի, նոյնքան թոյլ, նամարդ—ապերախտ տղամարդը կտուժէ կանարգուի ամբօրից և սոսկալի անմխիթար վախճան կունենայ: Նորա առհասարակ սիրում և յարգում են բոլոր քաջ տղամարդկանց—լինի դա թէկուզ իրենց ղեկերիմ թշնամին: Իսկ նոցա՝ խաշնարած լեռնցուն սովոր աւելորդապաշտութիւններ և նախապաշարուններն էլ—որոնց քրիստոնէական և մահմէդական նախապաշարունների խառնուրդ կարելի է համարել—նորից փայլում է պատերազմական ոգով: Եզդիներ որպէս արեւելցի նահապետական մի ժողովուրդ վերին աստիճանի հիւրասէր են և պարզ: Նորա տուն-օջաղը ամէն մի րոպէ բաց է Վատուծոյ հիւր-ի առաջ: Թէկուզ եզդու ամենաոխներիմ թշնամին լինի՝ երբ իւր սրբազան օջաղն է ընկնում՝ այլ ևս վրէժխնդիր լինել կամ նոյն իսկ հիւր չընդունել մեծ նամարգութիւն—ցածութիւն է համարւում: Այդ դէպքում եզդին ժամանակաւորապէս ամէն ինչ մոռանալով այդպիսի

¹⁾ Յառաջ եմ բերում Реклю-ի Всеобщая география-ից եզդիների երգերից, հետեւեալ տողերը «Ըսկալը դուրս է բերում գիականներ, նա յարգում է կեանք, իսկ փաշան միմիայն երիտասարդների արիւն է խմում: Թող անիծուի այն մարդը, ով երկու օրով սրտերին միմեանցից կրածանէ: Թող անիծուի այն մարդը, ով խղճահարուել չգիտէ: Գերեզմանը իւր մէջ ամփոփուածին չի վերադարձնի, իսկ բարձրեալ հրեշտակը կլսէ մեր հառաչանքը»:

Հիւրին պարտաւոր է որպէս «Աստուծոյ Հիւր» ընդունել, և ոչ որպէս թշնամի: Իսկ իւր օջաղից էլ դուրս գալուց յետոյ պարտաւոր է եղդին (ինչպէս նաև մուսուլման քիւրդը) իւր հիւրի ճանապարհորդութեան համար որոշ դիւրութիւններ տալ:

Եղդիների հիւրասիրութեան մասին եւրոպական մի քանի ճանապարհորդներ շատ աննպաստ կարծիքներ են յայտնել, բայց դա միմիայն իրենց կրօնական նողկալի պրոպագանդայի յաջողութիւն չգտնելու պատճառով է յառաջ եկել:

V

Եղդիներն էլ, ինչպէս մուսուլման քրդերը, կառաւարվում են իրենց ցեղապետներով: Նոքա՝ միմեանց հետ ունեցած կռիւների և վեճերի ժամանակ շատ սակաւ են կառավարութեան միջամտութեան դիմում: Սովորաբար նոցա դատերը գեղապետի վճռով է վերջանում: Ցեղապետն իւր ստորադրեալ քրդերի անսահման պետն է և նորա խանադան—ցեղական ազատներով կայացրած վճռին իւրաքանչիւր եղդին ամենայն ճշտութեամբ պարտաւոր է հնազանդուել: Նա վայելում է իւր գեղակիցների անսահման յարգանքը:

Ռուսահպատակ եղդի-քրդեր իրենց գլխաւոր կրօնապետ «շեխ-արարից» զատ (որ նստում է Արարանի Միբագ եղդի գիւղում) ունին և իրենց առանձին առանձին ցեղապետներ: Սինակի եղդիների ցեղապետ համարւում է Հասան աղայի որդի Ուսուֆ բէկը, իսկ Արարանում Խալիլ-բէկի որդի Վուլի բէկը:

Սինակի հռչակաւոր Հասան-աղան Ռուս-քրթական պատերազմի ժամանակ մեծամեծ ծառայութիւններ մատուցեց Ռուսաց բանակին,—Բայազիդի պաշարման ժամանակ, որի համար և նա վարձատրուած էր ռուսական բարձր չիններով: Հասան աղան վերջին տարիներս վախճանուելով, նորա տեղն է անցած իւր որդի Ուսուֆ բէկ, որ մօտ 30—35 տարեկան մի համակրելի անձնաւորութիւն է: Ուսուֆ-բէկը սովորել է Գէորգեան—Ճեմարանում—հանգուցեալ Գէորգ կաթողիկոսի օրով, բայց զանազան պատճառներից ստիպուած դ. թէ դ. դասարանից դուրս է եկել: Նա խօսում է հայոց լեզուն մաքուր գրականական բարբառով: Պատմում են, որ Հասան աղան մի վերին աստիճանի բարի և խելօք անձնաւորութիւն է եղել: Նա երկար տարիներ

Հայրաբար խնամել է իւր տիրելի ցեղակիցներին, որի համար էլ երախտագէտ եղբիւններ մեծ պատկառանքով և ակսոսանքներով են յիշում իրենց թանկագին ցեղապետի կենդանութիւն և իրենց անփոխարինելի կորուստը: Իսկ այժմ մեծ յարգանք և սէր են տածում դէպի նորա զաւակները: Քիւրդներն ընդհանրապէս չափազանց երախտագէտ են դէպի իրենց երախտաժառոյցներ: Նոցա ջէհէլ-անփորձ ցեղապետները՝ թէկուզ որքան էլ անընդունակ գտնուին դէպի իրենց ստանձնած պատասխանատու պաշտօնը, այնուամենայնիւ շատ ներողամիտ են դէպի իրենց երիտասարդ ցեղապետը—ի նկատի ունենալով որ իրենց ցեղապետը հասակն առնելով փորձառութիւն ձեռք կրերէ և իւր ցեղակիցների պաշտպան կհանդիսանայ:

Հասան աղան, ինչպէս ժամանակակից պահանջներն հասկացող մի խելօք անձնաւորութիւն, ցանկանում էր իւր խաւար և խաշնարած ժողովրդի մտաւոր հորիզոնը բարձրացնելու և ինչպէս պատմում են, քանիցս դիմել է յարգելի պրօֆ. Եղիաշարենանցին, որպէս զի եղբիւների կեանքին յարմարեցրած ապագայ եղբիական նորբացուելիք դպրոցների համար մի ծրագիր պատրաստի: Բայց դժբաղդաբար ինչ ինչ պատճառներից դրդուած այս համակրելի դիտաւորութիւնը անկատար է մնում:

VI.

Ռուսական կառավարութիւնը մօտից ուսումնասիրած լինելով եղբիւների խաղաղ բնաւորութիւն և աշխատանքի արդար ձգտումները, բնականաբար չէր կարող անտարբեր աչքով հանդիսատես լինել նոյն իսկ ուսման և կուլտուրայի նշքններ ցոյց տուող մի բուռն ժողովրդի, և ահա եղբիւների կեանքին մօտիկ ծանօթ մի քանի պաշտօնական անձնաւորութիւնների միջամտութեամբ 1902 թ. թոյլտուութիւն է ստացում ուսութեւնը քական սահմանադրւում գտնուող Ձոռ կոչուած եղբի գիւղում արքունական ծախսով Ռուսաց տարրական դպրոցների ծրագրով մի դպրոց հիմնել: Դպրոցի շինութեան համար գանձարանը 15,000 ռ. է յատկացրել և շուտով սկսուելու է դպրոցի երկարկանի շինութիւնը (երեւի այժմ արդէն շինուած է): Յիշատի, որ այս դպրոցի հաստատութիւնը մի շատ ուշագրաւ դէպք է, որովհետեւ դա ռ. քրդական դպրոց կարող է լինել (ա՛ որ բացուել է վերջին տարիներումս, գտնուում է Արարանի

Կոնդաղսաղ եղբի գիւղում), այն էլ ոչ թէ միայն Ռուսաստանում գտնուող քրդերի, այլ և աշխարհումս գտնուող բոլոր քրդերի համար, Ի սրտէ ցանկանում ենք մեր հարեան եղբիներին կատարեալ յաջողութիւն, բաղաբախթութեան այս առաջին քայլի հաճելի ասպարիզում: Լիպոյս ենք, որ եղբի քրդերը ցոյց կտան աշխարհին, որ մարդասպանութիւնից և կոշոպութից զատ իրենք էլ ընդունակ են կրթութիւն, ուսում և գիտութիւն ստանալու՝ ինչպէս իրենց հարեան հայեր և ուրիշներ— լինի դա թէկուզ կրէական քայլերով:

Եղբիներն իրենց ցեղապետներին և կրօնականներին ըստ չափու կարեաց չի որոշ նուէր են յատկացնում: Այդպիսի նուէրներ դրամից զատ երբեմն լինում են ուշաքար, իւղ, պանիր և այլն: Նուէր հաւաքելու են գալիս նոյնպէս Միջագետքի՝ նուցա կրօնապետներից կաւալ կոչուածներ, Կաւալների մուտքը ոռոտահատակ եղբիների մէջ հայկական և եղբիների կոտորածներից յետոյ ծածկաց կառավարութեան կողմից խստիւ արգելուած էր: Իսկ այս վերջին 3 տարին, նորից սկսել են նուցա Ռուսաստան անցնել:

VII.

Եղբի տղամարդկանց դէպի կանայք ունեցած սիրալիր վերաբերմունքը, իսլամական ազգերի հետ համեմատած, շատ բարձր է կանգնած: Եղբիների՝ ինչպէս նաև միւս քիւրդերի մէջ, կին կամ աղջիկը տղամարդկանցից ծածկուել չգիտէ (բացառութիւն են կազմում նորահարսներ), տղամարդու ստրուկը չէ: Քրդուհիք ատում են երկչոտ, փոքրոգի տղամարդկանց: Յաճախ եղբուհիք ճակատամարտերում մասնակցութիւն են ցոյց տալիս տղամարդկանց և մինչև անգամ հերոսութեան կողմից յետ չեն մնում իրենց քաջ տղամարդկանցից: Եղբիների մելամաղձոտ երգերի մէջ հերոս եղբուհիների թիւը տասնեակների է հասնում: Եղբուհին իւր ազատ կամքով սիրած քաջ տղամարդի (նոցա իգէալը քաջ տղամարդն է) հետ կարող է ամուսնանալ, հակառակ դէպքում ծնողների առարկութիւն և զանազան ասէկօսէներ առ ոչինչ համարելով, սիրած երիտասարդի հետ իւր հայրենական տանից փախուստի կտան: Այդ դէպքում երիտասարդ զոյգերը իրենց աւելի ապահով զգալու համար, ցեղի ամենաքաջ տղամարդի օջաղն են ձգում, որը պարտաւոր է հնա-

րաւորութեան չափ պաշտպան հանդիսանալ իւր սրբազան օջաղն ընկնող զոյգերին, իսկ աղջկայ և տղամարդի բարեկամներ ի մէջ անխուսափելի դարձած արիւնհեղութիւնների առաջ առնել (որովհետեւ բրդի աղջիկ փախցնելը մեծ անպատուութիւն է համարուում)—յատկացնելով տղայի բարեկամներից վեր առած մի որոշ գումար կամ անասուն, աղջկայ բարեկամներին: Հայաստանում բնակւող եղբիւների մէջ ինչպէս թշուառութիւնը նոյնպէս և բաղձակնութիւն տարածուած չէ, հոգեւորականներ միայն ասում են իրաւունք ունին մի քանի կին պահելու: Եղբուհիք սիրում են թանկագին զարդարանքներ և գունաւոր պայծառ զգեստներ: Նոքա ունին մեծ և արտայայտիչ աչքեր, սիրուն ունքեր, արծուաքիթ, ջղատ իրան, Ամենից շատ սիրում են նոքա մազերի բազմաձիւղ հիւսեր, Եղբուհիք (ինչպէս նաեւ տաճկահայ գիւղացի աղջիկներ) քանի աղջիկ են, իրենց գլուխները միայն ֆէսով են ծածկում, իսկ հէնց որ ամուսնանում են, նոր սկսում են իրենց գլուխները բարակ շղարշով (եղվայով) կապել: Եղբուհիք չափազանց աշխատասէր են և ուժեղ. նոքա ֆիզիքական աշխատանքի ժամանակ երբէք յետ չեն մնայ իրենց տղամարդկանցից, Հետաքրքիր է տեսնել, թէ ինչպէս աշխատասէր բրդուհին ամուսնաց ամենաշոգ եղանակին սարի զաւակներ իրենց սիրասուն եայլաններից դէպի մօտակայ բաղաք կամ գիւղ իւղ, պանիր, մածուն կամ մի որեւիցէ կանաչեղէն ծախելու գնալիս, միաժամանակ և իւր բարձած եղն է բշտւում, և իւր խուրջու մէջ դրած կամ եղի վերայ կապած երեխային է խնամում և թէ ձեռքի վերայ փաթաթած թելն է մանում ու երգում: Կատարեալ երջանկութիւն. . . թէ որքան եղբի կամ մուսուլման բրդեր ընտանեկան պատուասիրութիւն ունին, նոցա անաղարտութեան խիստ նախանձախնդիր են, դուրս ամենափայլուն ապացոյց կարող է լինել այն՝ որ մինչև օրս երբէք տաճկաց մեծամեծ պաշտօնեաներ չեն կարողացել կամ չեն համարձակուել քիւրդ աղջկան իրենց զգուշի հարէմ տանել, ինչպէս յաճախ չէրբէգուհիներին են տանում:

VIII.

Եղբի բրդերն անհամեմատ աւելի շատ երկրագործութեամբ են պարապում (օր. Աբարանի, Շիրակի րրդեր արդէն հրաշալի կերպով սկսել են երկրագործութեամբ պարապել)—քան մահ-

մեղական բրդեր, Բայց չնայելով այդ հանգամանքին. այնուամենայնիս բիւրդը երբէք անասնապահութիւնից և Հայաստանի գեղածիծաղ լեռներ բարձրանալուց ձեռք չի բաշում: Առանց լեռների նոքա իւանց կենդանի մեռածներ են համարոււմ: Եղգիններն սկսում են լեռներ բարձրանալ մօտաւորապէս մայիսի վերջերից, իսկ օգոստոսի վերջերը իրենց տներ վերադառնալով սկսում են Վիւլ ու կուտով՝ կամ տնային զանազան աշխատանքով զբաղուիլ:

Պարելի է ասել, որ ընդհանրապէս եզդիք հայ և թուրք գիւղացիներից անտեսապէս աւելի ցածր աստիճանի վերայ են կանգնած: Դորա պատճառը մասամբ նոցա բնակավայրերի խիստ կլիման է, որ տարածուած լինելով Հայաստանի բարձրաբերձ լեռների սարահարթերի վերայ, չեն կարող նոցա գանբերը ձիւնից, գրտից և քարերից առատ բերք ստանալ, և թէ բացի մի բանի հացաբոյսերից (գլխաւորապէս դարուց), լեռներում ոչ մի բոյս չի կարող աճել: Մնում է նոցա ապրուստը միմիայն խաշնարածութեան վերայ, որ տարաբաղաւոր շատ անգամ ձեան երկարանալու ու դարման չճարուելու կամ զանազան վարակիչ հիւանդութիւնների պատճառով, խեղճերի սիրելի անասունները, նոցա աչքի լոյս ալիկ կենդանիներն ամբողջովին կոտորուում են: Այսպիսով եզդին զրկուելով նիւթական մի բանի անհրաժեշտ կարիքներից, նոքա վերջին տարիներս նոյնպէս սովորել են պանդխտութեան գիմել—իրենց առօրեայ ցաւերը հոգալու համար մի բանի սև կոպէկներ աշխատելու: Առ այժմս նոքա Թիֆլիս և մասամբ էլ Բաթում են պանդխտութեան գիմում և սովորաբար ջրկրութեամբ կամ բեռնակրութեամբ են զբաղւում: Ինչպէս ասացի, նոքա անտեսապէս հայ գիւղացիներից աւելի անմխիթար դրութեան մէջ գտնուելով, ահագին քանակութեամբ եզդիներ (ինչպէս և մուսուլման բրդեր) իրենց հարեան գիւղերն են թափւում, գիւղական մի որեւիցէ աշխատանք ձարելու: Դորա համար մինչև օրս էլ հայ գիւղացու ամենահմուտ խաշնարածը, հորթարածը, մշակը, աշակին և այլն, բոլորն էլ եզդի կամ մուսուլման բրդերն են: Պարզ է, որ հայերի հետ ունեցած այս մշտական շփումը, պէտք է ստեղծէր փոխադարձ սէր և սերտ յարաբերութիւն: Այդ պատճառով էլ այժմս գրեթէ բոլոր եզդիներն էլ դիտեն հայ լեզուն, ծանօթ են հայի սովորութիւնների, նիստ ու կացի հետ և այլն: Նոցա զանազան հայ գիւղական բարբառներով աղաւաղուած խօսակ-

ցումը ուղղակի մարդկանց ծիծաղ միայն կարող է յառաջ բերել:

Եզդի տղամարդկանցից շատերը լինելով Թիֆլիս, Բաթում, ինչպես և գտնուելով մեծաւ մասամբ ուռւածորբական սահմանագլուխներում (որովհետեւ եզդի զիւղերի մեծ մասը սահմանագլխի վերայ է գտնուում), շփում ունենալով սահմանապահ զինուորների հետ, նոքա սկսել են սովորել մինչ և անգամ ուսերէն և վրացերէն («շալթայ-բալթայ»): Ուրեմն ուսահպատակ եզդիները հայերէն և թուրքերէն լեզուներէն զատ զիտեն քիչ ու միչ ուսերէն և մասամբ վրացերէն լեզուներ:

IX

Այս հետաքրքրական դեղը, որ միշտ խորին ուշադրութեան արժանի է, որքան մօտիկից նայում և ուսումնասիրում է մարդ, այնքան համոզուում է, որ դոքա (ինչպէս և մուսուլման քրդերի մի քանի դեղեր) կրօնափոխ եղած և կիսավայրենացած հայեր են, որոնք Հայաստանի բաղաբական անկումից յետոյ լեռներում ապաստան գտնելով, խռնուել են լեռնային ելուզակների հետ. այդ բանի ամենաանկաշառ ապացոյց կարող է լինել մանաւանդ եզդիների և միւս մուսուլման քրդերից մի քանի դեղերի հայկական տիպը, նոցա սովորութիւնները, հայերի հետ համահաւասար կերպով մտադնեցող և բոլրիկ ոտքերով հայ սրբավայրեր և ուխտատեղիներ ուխտի գնալը, խուշի ու մոմ ծխելը, ծովու պատ (գլխաւորապէս ս. Սարգսի և ս. Գէորգի) պահել, հայ հոգեւորականներին պատուով ընդունելը¹⁾, հայերին յարգել և այլն: Աւելի մօտիկ են հայերին եզդիների և մուսուլման քրդերի մանաւանդ ազնուական ցեղերը, որոնք իրենց վեհանձնութեամբ և ազնուական գիմագծերով կարծես հայ նախարարութեան կիսավայրենացած շարու նախնիները լինեն: Ընթերցողը թող չզարմանայ, եթէ ասեմ որ եզդիները հայկական հարցով և հայ ֆիդայուս կեանքով աւելի շատ են հետաքրքրուում, քան հայերիցս շատերը: Անհնարին բան է, որ եզդին իւր բարեկամ հային տեսնելիս

¹⁾ Ասում են, որ եթէ եզդիներ Յիսուսի անունով անիծուին, իրենց մեղքերը բաւելու համար պարտաւոր են 40 օր ապաշխարել:

Հայկական հարցի վերաբերեալ մի քանի կիսակտուր տեղեկութիւններ չպահանջէ: Ինչպէս մի քիչ վերե յիշեցի, նոքա ամենայն ջերմեռանդութեամբ համակրում են հայ սրբերին և ուխտատեղիներին: Օրինակ Սինակի եղբիւնքի ամենաժողովրդականացած սրբաւայրը ռուս-թրքական սահմանադիմում գտնուող Զոռայ հռչակաւոր հայկական կիսաքանդ վանքն է, որ գտնուում է համանուն եղբի գիւղում: Մեծ երկիւղածութեամբ են վերաբերում բրդերը գէպի Արարանի և Հիրակի «Ալաջա» լեռան փէշերքի վերայ գտնուող բազմաթիւ հայ կիսակործան վանքեր և Արագածի հարաւային լանջերի վերայ գտնուող Գօշ-Մեխի-թարի վանքը:

Զոռայ վանքը կիսաքանդ դրութեան մէջ գտնուելով, հայերի կողմից ոչ որ չի բնակւում, միայն եղբի ժամկոչներ — ինչպէս նաև համայն դիւղացիք ամենայն երկիւղածութեամբ և սիրով պահպանում և մաքրում են վանքը, իսկ կիրակնամուտներին անպայման վանքի ձիթէ ճրագները վառ պէտք է պահեն:

Զոռայ վանքի ուխտը լինում է Վարդապետի տօնին, որտեղ բացի բազմաթիւ հայ (գլխաւորապէս Սուրմայուի գաւառից) և եղբի ուխտաւորներից, ահագին քանակութեամբ մուսուլման բրդեր և մինչև անգամ սահմանադիմի տաճկաց զինուորներ և սպաներ են հաւաքւում:

Ա. ԳԻՐԻՔԵԱՆ

Մոսկուա